

գնացիւքն գրեթէ արտաքս ոստէաք<sup>1</sup>, որպէս ճընճ-  
ղուկ ապրեալ ի յորսոյ. բացաք զաչս մեր եւ յա-  
ռեցաք ի տեսանել զբարձրագիտակ կաթողիկէ  
սրբոյ Կարապետին, եւ ահա ոչ երեւիւր. զի ան-  
կեալ էր յերկիր. ընդ որում եւ այլ շինուածք մեծի  
ուխտին քայքայեալ եւ կործանեալ էին:

Յայնժամ համրացաք ամենեքեան եւ ոչ  
կարացաք խօսիլ. սգաւորեցան սիրտք մեր եւ այլա-  
գունեցաք ի դէմն ի վերայ ահագին սաստկու-  
թեանն:

Եւ դիմեցաք անտի ի Բաբելոն<sup>2</sup>, որ Կայի ի վերայ վանիցն եւ առ տաճարան<sup>3</sup>, եւ  
աեսաք զնոսա ոչ որպէս յերեկն եւ յեռանդն, այլ  
յայլ իմն դարձեալ կերպարան: Եւ անդ եւս՝ առ-  
հասարակ ամենեքեան յարտասուս հարեալ լացաք  
մեծակական ողբով ի հարուստ ժամն, մինչ գրեթէ  
յառհասարակ ձայնէ կրօնաւորացն գոչման՝ ան-  
բան տարեբքն յողբալ դիմէին:

Եւ իջեալ անտի ի Կաթողիկէ, անցաք առ  
դամբարանօք մարմնով մեռելոցն՝ աւաղելով զկեանս  
հոգւով մեռելոցս. եւ մնացաք անդ ի Կաթողիկէ՝  
զերիս աւուրս առ հուպ վանիցն<sup>3</sup>:

<sup>1</sup> “Եւ Ասայել թեթեւ էր ոտիւք իրեւ զմի յայ-  
ծեմանց ի դաշտի” Դաւթի պատերազմիկներէն, որ իր ան-  
զգուշութեան հետեւանքով Արեւնների Նիդակին զոհուեցաւ  
(Բ. Թագ. Բ. 18—23):

<sup>2</sup> Վանքի արեւմտեան կողմը քիչ մը բարձր է, ուս-  
կից շատ լաւ կը տեսնուի Ս. Կարապետի տաճարներուն  
խումբը: Տաճարները չըջապատուած են միաբանութեան  
երկյարիւնի բնակարաններով: Արեւմտեան կողմը՝ միաբա-  
նական չըջանակէն դուրս՝ հիմայ կը բարձրանայ Մամբրե  
Եպս.ի (հանգուցեալ) սկսած եւ կէս թողած վարժարանը,  
իբր երկրորդ պարիսպ, կից Կաթողիկէ յիշած բլուրին:

<sup>3</sup> Կաթողիկէ վանքին թէ հիւսիսային եւ թէ հա-  
րաւային կողմն ալ կայ: Հարաւայինը՝ աւելի Արեւմտեան  
հարաւային է՝ ճիշդ այն բլուրին ուղղութեամբ, ուր վաղե-  
ցին շարժի սարսափին տակ: Այդ բլուրը վերջերս կոչուած